

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
Քրեական իրավունքի ամբիոն

ԴԱՍԸՆԹԱՅԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ 1904/Յ08 «Քրեակատարողական իրավունք»

Որակավորման

աստիճան՝

բակալավրի կրթական ծրագիր

Կազմեց՝

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հ. Խաչիկյանը

ԵՊՀ հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ 2017

ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1904/Յ08 «Քրեակատարողական իրավունք» (3 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (22 դասախոսություն, 8 սեմինար, 60
ինքնուրույն աշխատանք)
5-րդ կիսամյակ, առանց ընթացիկ գնահատմամբ դասընթաց

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված բոլոր պատժատեսակների կատարման և կրման իրավական կարգավորման խնդիրներին:

Կրթական վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կունենա

Գիտելիք՝

- հանցանք կատարած անձանց ուղղման սոցիալ-իրավական համակարգի մասին
- առանձին պատժատեսակների կատարման կարգի և պայմանների վերաբերյալ

Ունակ կլինի.

- գնահատել քրեակատարողական քաղաքականության տեղն ու դերը հանցավորության դեմ պայքարի համակարգում
- բացահայտել դատապարտյալների իրավական վիճակի էությունը
- վերլուծել առանձին պատժատեսակների կատարման կարգի և պայմանների առանձնահատկությունները
- պատկերացնել պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների համակարգը, դրանց գործունեության նկատմամբ վերահսկողության ու հսկողության եղանակները

- պատկերացնել ազատությունից զրկելու հետ կապված և չկապված պատիժների կատարման կարգն ու պայմանները
- հասկանալ պատժից ազատելու իրավական կարգավորումը
- ընկալել քրեական պատիժների կատարման միջազգային իրավական տեսանկյունը

Մտուզումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով (հարցատոմսը պարունակում է 4 տեսական հարց (յուրաքանչյուրը առավելագույնը 5 միավոր, միավորների քայլը 0.5 է):

Թեմա 1. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ
ՀԱՄԱԿԱՐԳԸ

(2 ժամ դասախոսություն)

1. Քրեակատարողական քաղաքականության բովանդակությունը, խնդիրները, նպատակները: Հանցավորության դեմ պայքարի քաղաքականությունը և քրեակատարողական քաղաքականությունն այդ համակարգում (քաղաքականություն հանցագործությունների կանխման բնագավառում, քրեական քաղաքականություն և քաղաքականություն քրեական պատիժների կատարման բնագավառում): Քրեակատարողական քաղաքականության հիմնական ուղղությունները և զարգացումը որոշող սոցիալական գործոնները: Քրեակատարողական քաղաքականության զարգացման հիմնական ուղղություններն արդի ժամանակաշրջանում (ժողովրդավարությունը և մարդափրությունը): Օրենքը որպես քաղաքականության դրսևորման հիմնական ձև: Քրեակատարողական քաղաքականության իրացումը՝ սուբյեկտները, հիմնական ձևերը և բովանդակությունը: 2. Պատժի հասկացությունը և տարրերը: 3. Հանցանք կատարած անձանց ուղղման սոցիալ-իրավական համակարգը (ուղղիչ համակարգ): Ուղղիչ մեթոդները կրիմինոլոգիայում. վերաբերմունք դատապարտյալների նկատմամբ պենիտենցիար հիմնարկներից դուրս և վերաբերմունք դատապարտյալների նկատմամբ պենիտենցիար հիմնարկներում: 4. Քրեակատարողական իրավունքի հասկացությունը, առարկան և մեթոդը: Քրեակատարողական իրավունքի, որպես իրավունքի ինքնուրույն ճյուղի, հասկացությունը և հիմնական տարրերը: 5. Քրեակատարողական իրավունքի հարաբերակցությունն իրավունքի այլ ճյուղերի հետ: Քրեակատարողական իրավունքի տեղը հանցավորության դեմ պայքարը կարգավորող իրավունքի ճյուղերի համակարգում: Քրեական իրավունքի հիմնարար դերը քրեակատարողական իրավունքի ձևավորման գործում: Իրավունքի այս ճյուղերի փոխկապակցվածության բնույթն ու աստիճանը: Փոխադարձ կապը քրեա-

կատարողական իրավունքի, քրեադատավարական իրավունքի և կրիմինոլոգիայի միջև: 6. Քրեակատարողական իրավունքի սկզբունքները: Մարդասիրության, օրինականության, օրենքի առաջնության պարտադրականության, պատիժների կատարումը տարբերակելու և անհատականացնելու, պատիժների և ուղղման միջոցների զուգակցման սկզբունքները: 7. Քրեակատարողական իրավունքի գիտությունը: Քրեակատարողական իրավունքի գիտությունը և հարակից ոչ իրավական գիտությունները՝ քրեակատարողական մանկավարժություն, քրեակատարողական հոգեբանություն: 8. Քրեակատարողական իրավունքի դասընթացի առարկան և համակարգը:

Հարցեր 1-8 – Անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը խնդրահարույց հարցերի վրա բնեռելով:

Հարցեր 1-8 – Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խոր գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Խաչիկյան Հ.Մ. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական իրավունք: Ուսումնական ձեռնարկ Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011:
2. ՀՀ Քրեակատարողական օրենսգիրք:

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Алексеев А.И. Российская уголовная политика: преодоление кризиса. М., 2006.
2. Гаврилов Б.Я. Современная уголовная политика России: цифры и факты. М., 2008,
3. Зубков А.И. Карательная политика России на рубеже тысячелетий. М., 2000.

4. Кубов Р.Х. Развитие уголовной политики на современном этапе. Российской следователь, 2009, N 3,
5. Стручков Н.А. Курс исправительно-трудового права. М., 1984.
6. Зубарев С.М., Казакова В.А., Толкаченко А.А. Уголовно-исполнительное право 2010.

**Թեմա 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ
(Ինքնուրույն աշխատանք)**

1. Քրեակատարողական օրենսդրության հասկացությունը, բովանդակությունը, նպատակները և խնդիրները: ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը: Ենթաօրենսդրական ակտերը որպես քրեակատարողական օրենսդրության աղբյուրներ: Քրեակատարողական օրենսդրությունը և միջազգային իրավական ակտերը, դրանց փոխհարաբերությունը: 2. Քրեակատարողական իրավունքի նորմերի հասկացությունը, բովանդակությունը, տեսակները և կառուցվածքը: 3. Քրեակատարողական իրավունքի նորմերի կիրառումը: Քրեակատարողական օրենսդրության գործողությունը ժամանակի ընթացքում և տարածության մեջ: Քրեակատարողական իրավահարաբերություններ:

Հարցեր 1-3 – Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Խաչիկյան Հ.Մ. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական իրավունք: Ուսումնական ձեռնարկ Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011:
2. ՀՀ Քրեակատարողական օրենսգիրք:

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Анисимков В.М. Предмет и принципы уголовно-исполнительного регулирования: актуальные проблемы теории и правоприминительной практики. Краснодар, 2009.
2. Зубарев С.М. Новое в уголовном и уголовно-исполнительном законодательстве: некоторые аспекты гуманизации карательной политики. Журнал Российского права 2004, N 4.
3. Михлин А.С. Концептуальные проблемы нового Уголовно-исполнительного кодекса Российской Федерации. Государство и право 1997, N 8.
4. Павлов И.Н. Некоторые аспекты реализации принципа дифференциации и индивидуализации исполнения наказаний в уголовно-исполнительном праве. Уголовно-исполнительная система: право, экономика, управление 2006, N 6.
5. Тепляшин П.В. Гармонизация уголовно-исполнительного законодательства России в контексте соотношения международного и внутригосударственного права. Международное публичное и частное право, 2008, N 5.
6. Зубарев С.М., Казакова В.А., Толкаченко А.А. Уголовно-исполнительное право 2010.

Թեմա 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ (ՊԵՆԻՏԵՆՑԻԱՐ) ՕՐԵՆՄԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՐԳԱՅՄԱՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ

(Ինքնուրույն աշխատանք)

1.Քրեական պատիժների և հարկադրանքի միջոցների պատմական տեսակները: Արյան վրեժը, պատիժները և հարկադրանքի ձևերը Հին և Միջնադարյան Հայաստանում (մ.թ.ա. 1-ին հազ. – մ.թ. 13-րդ դ.): Մխիթար Գոշի (1184թ.) և Սմբատ Սպարապետի (Գունդս-

տալ) (1265թ.) դատաստանագրքերը: Պենիտենցիար իրավունքը Հայաստանում անկախ պետականության կորստի և ֆեոդալական (ավատատիրական) հարաբերությունների լճացման պայմաններում (14-19դդ.): Պենիտենցիար օրենսդրությունը Հայաստանի առաջին հանրապետությունում (1918-1920թթ.): 2. Հայաստանի ուղղիչ-աշխատանքային օրենսդրությունը խորհրդային շրջանում: ՀԽՍՀ 1934թ. ուղղիչ-աշխատանքային օրենսգիրքը որպես խորհրդային պետության ուղղիչ-աշխատանքային քաղաքականության դրսևորման ձև: Քրեական և ուղղիչ-աշխատանքային քաղաքականության ռեպրեսիվ բնույթը, շեղումը պատիժների կատարման օրենսդրական կարգավորումից: 3. ՀԽՍՀ 1971թ. ուղղիչ-աշխատանքային օրենսգիրքը: Դատապարտյալների նկատմամբ ուղղիչ-աշխատանքային ներգործության միջոցների հետ չկապված քրեական պատիժները կատարելու կարգի և պայմանների կանոնադրությունը (1985թ.): Պատիժների կատարման բնագավառում օրենսդրության կատարելագործումը՝ 80-ական թթ. և 90-ական թթ. սկզբին: Անցումն ուղղիչ-աշխատանքայինից քրեակատարողական օրենսդրության: Քրեակատարողական օրենսդրության հայեցակարգը: ՀՀ քրեակատարողական օրենսգրքի մշակումը և ընդունումը:

Հարցեր 1-3 – Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. ՀՀ Քրեակատարողական օրենսգիրք
2. Хачикян А.М. История применения и правового регулирования наказания в виде лишения свободы в Армении. Ереван, 2005.

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Մխիթար Գոշ. Դատաստանագիրք: Երևան, 2001:
2. Սմբատ սպարապետ. Դատաստանագիրք: Երևան, 2008:

Թեմա 4. ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԻՇՆԵՐԻ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՁԱՆՑ
ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ
(2 ժամ դասախոսություն)

1. Դատապարտյալների իրավական վիճակի հասկացությունը և սոցիալ-իրավական հիմքերը: Քաղաքացու իրավական կարգավիճակը որպես պատիժ կրող անձանց իրավական դրության հիմք: Դատապարտյալների իրավական դրության բովանդակությունը: Դատապարտյալների իրավունքները, օրինական շահերը և պարտականությունները, դրանց հասկացությունը և սոցիալ իրավական բնութագիրը: Դատապարտյալների իրավական դրության ընդհանուր սկզբունքների ամրագրումն օրենսդրությունում: Դատապարտյալների քաղաքացիության և ընդհանուր քաղաքացիական իրավունքների պահպանումը: Քրեական և քրեակատարողական օրենսդրությունը որպես քրեական պատիժների դատապարտված անձանց իրավունքների սահմանափակման աղբյուր:

2. Դատապարտյալների հիմնական պարտականությունները:

3. Դատապարտյալների հիմնական իրավունքները: Քրեական պատիժներ կրող անձանց հիմնական իրավունքները և պարտականությունները, դրանց բովանդակությունը և ամրագրումը օրենսդրությունում: Քրեական պատիժների դատապարտված անձանց հատուկ իրավունքները:

4. Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավական դրության սահմանման առանձնահատկությունները:

Հարցեր 1-4 – Անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը խնդրահարույց հարցերի վրա բնեռելով:

Հարցեր 1-4 – Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խոր գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Խաչիկյան Հ.Մ. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական իրավունք: Ուսումնական ձեռնարկ Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011:
2. ՀՀ Քրեակատարողական օրենսգիրք

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Белик В.М. О правовом статусе лиц, осужденных к наказанию в виде лишения свободы. Законы России: опыт, анализ, практика 2010, N 1.
2. Иваков И.М. Правовой статус осужденных, отбывающих наказание в виде лишения свободы. Пробелы в российском законодательстве 2010, N 3.
3. Добрынина М.Л. Правовой статус осужденных к лишению свободы. Российский следователь 2006, N 11.
4. Марина Е.А. Правоограничения общегражданского статуса осужденных к лишению свободы. Российский следователь 2007, N 19.
5. Миняева Т.Ф. Правовой статус личности осужденных в Российской Федерации. М., 2001.
6. Селиверстов В.И. Теоретические проблемы правового положения лиц, отбывающих наказание. М., 1992.
7. Зубарев С.М., Казакова В.А., Толкаченко А.А. Уголовно-исполнительное право 2010.

Թեմա 5. ՊԱՏԻԺՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐՆ ՈՒ
ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ: ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՆԿԱՏՄԱՄԲ

(2 ժամ դասախոսություն)

1.Քրեական պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների տեսակներն ու խնդիրները: Պատժի նպատակները: Քրեական պատիժներ կատարող հիմնարկների և մարմինների հասկացությունը, տեսակները և խնդիրները: Ուղղիչ հիմնարկները, կալանատները, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումները, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, կարգապահական գումարտակները որպես պատիժներ կատարող հիմնարկների ու մարմինների հիմնական տեսակներ: Դրանց իրավասությունը, կառուցվածքը և ենթակայությունը: ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական համակարգը. խնդիրները, կառուցվածքը և գործունեության հիմքերը: 2. Ուղղիչ (քրեակատարողական) հիմնարկների տեսակները և խնդիրները: Ուղղիչ հիմնարկների տեսակները և խնդիրները: Գործունեության կազմակերպական հիմքերը, կառուցվածքը, կառավարումը, ֆինանսավորումը, փոխհամագործակցությունը իրավապահ այլ մարմինների հետ: 3.Վերահսկողությունն ու հսկողությունը պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների գործունեության նկատմամբ: Պատիժներ կատարող հիմնարկների և մարմինների աշխատակիցների իրավական վիճակը՝ հիմնական իրավունքները և պարտականությունները: Նրանց ներկայացվող հիմնական պահանջները: Պատիժներ կատարող հիմնարկների և մարմինների աշխատակիցների սոցիալ-իրավական պաշտպանվածությանն բարձրացման խնդիրներին ուղղված միջազգային իրավական փաստաթղթերը: Պատիժներ կատարող հիմնարկների և մարմինների աշխատակիցների գործունեության անվտանգության ապա-

հովումը: 4. Դատախազական հսկողությունը պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների գործունեության նկատմամբ: 5. Դատական վերահսկողությունը պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների գործունեության նկատմամբ: 6. Գերատեսչական և հասարակական վերահսկողությունը պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների գործունեության նկատմամբ: Վերահսկողությունն ու հսկողությունը պատիժներ կատարող հիմնարկների և մարմինների գործունեության նկատմամբ: Վերահսկողության ու հսկողության սոցիալ-իրավական նշանակությունը և հասկացությունը: Դատախազական հսկողությունը: Դատական վերահսկողությունը: Գերատեսչական և հասարակական վերահսկողությունը:

Հարցեր 1-6 – Անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը խնդրահարույց հարցերի վրա բևեռելով:

Հարցեր 1-6 – Ինքնուրույն աշխատանք, ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խոր գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Խաչիկյան Հ.Մ. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական իրավունք: Ուսումնական ձեռնարկ Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011:
2. ՀՀ Քրեակատարողական օրենսգիրք

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Елистратов В.С. Уголовно-исполнительная система в механизме современного российского государства. Уголовно-исполнительная система: право, экономика, управление 2008, N 2.

2. Печников А.П. Тюремные учреждения российского государства: историческая хроника. М., 2004.
3. Уголовно-исполнительная система, 130 лет. М., 2009.
4. Зубарев С.М. Теория и практика контроля за деятельностью персонала пенитенциарной системы. М., 2006.
5. Муратова Н.Г. Судебный контроль в пенитенциарной системе. “Черные дыры” в Российском законодательстве 2004, N 3.
6. Общественный контроль в местах заключения/ сост. Л. Волкова, А. Прибылов. М., 2004.
7. Колодин Р.В. Об истории становления общественного контроля за деятельностью уголовно-исполнительной системы. Уголовно-исполнительная система: право, экономика, управление 2009, N 6.
8. Зубарев С.М., Казакова В.А., Толкаченко А.А. Уголовно-исполнительное право 2010.
9. ՀՀ օրենքը «Քրեակատարողական ծառայության մասին» (08 հուլիսի 2005թ.):

Թեմա 6. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ԷՆՏ ԶԿԱՊՎԱԾ

ՊԱՏԻԺՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

(2 ժամ դասախոսություն)

1.Տուգանք պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները: Տուգանքի կամավոր, ժամանակին վճարումը դատապարտյալի կողմից: Տուգանքի վճարման ժամկետի երկարաձգումը, մաս առ մաս վճարելը: Տուգանքի վճարման հարկադիր կատարումը: Տուգանքի փոխարինումը հանրային աշխատանքներով:

2.Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները: Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից

գրկելը պատժատեսակի կատարումն ապահովող մարմինները, ժամկետները հաշվելու կարգը: Դատապարտյալի աշխատավայրի վարչակազմի պարտականությունները: Որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու իրավասություն ունեցող մարմինների կամ կազմակերպությունների պարտականությունները: Դատապարտյալի պարտականությունները: 3. Հանրային աշխատանքներ պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները: Վերահսկողությունը հանրային աշխատանքների կատարման նկատմամբ: Դատապարտյալի պատասխանատվությունը: Հանրային աշխատանքների փոխարինումը կալանքով կամ որոշակի ժամկետով ազատագրվմամբ: 4. Հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները: Հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելու իրավական հետևանքները: 5. Գույքի բռնագրավում պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները: Բռնագրավման ենթակա գույքը: Բռնագրավման ոչ ենթակա գույքը: ՀՀ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը որպես գույքի բռնագրավում պատժատեսակը կատարող մարմին: 6. Զիվորական ծառայության մեջ սահմանափակում պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները:

Հարցեր 1-6 – Անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը խնդրահարույց հարցերի վրա բնեռելով:

Հարցեր 1-6 – Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խոր գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Խաչիկյան Հ.Ս. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական իրավունք: Ուսումնական ձեռնարկ Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011:
2. ՀՀ Քրեակատարողական օրենսգրքը
3. ՀՀ ՍԴ -1082 որոշումը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի և 54-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով: 23.04.2013
4. ՀՀ ՍԴ -1082 որոշումը «Ակբա-Կրեդիտ-Ագրիկոլ բանկ», «Արցախբանկ», «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» և «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ների դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով: 12.07.2011

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Данилов Д.Д. Организационно-правовые основы исполнения уголовно-исполнительными инспекциями наказаний, не связанных с лишением свободы и контроля за условно осужденными. Рязань 2010.
2. Дополнительные виды наказаний: уголовно-правовой, уголовно-исполнительный аспекты: монография/ под ред. А. Н. Павлухина. М., 2007.
3. Лемперт И.Н. Исполнение наказаний, не связанных с лишением свободы: учебное пособие. Абакан, 2008.
4. Плешков В.А. Взыскание штрафа, назначенного в качестве наказания за совершение преступления. Уголовно-исполнительная система: право, экономика, управление 2009, N 4.
5. Степашин В. Последствия неисполнения уголовного наказания в виде штрафа. Уголовное право 2010, N 2.

6. Белякова Н.И. Некоторые проблемы исполнения уголовных наказаний в виде обязательных и исправительных работ. Законодательство 2009, N 9.
7. Безнасюк А.С. Уголовные наказания военнослужащих: теория, законодательство, практика. М., 1999.
8. Воробьев А.Г. Некоторые вопросы производства денежных удержаний с военнослужащих, осужденных к уголовному наказанию в виде ограничения по военной службе. Право в Вооруженных силах 2010, N 9.
9. Зубарев С.М., Казакова В.А., Толкаченко А.А. Уголовно-исполнительное право 2010.

Թեմա 7. ԱԶՍՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ

ՊԱՏԻԺՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

(2 ժամ դասախոսություն)

1. Կալանքը որպես քրեական պատիժ: Կալանքի հիմնական տարրերը: Կալանք պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները: Կալանքի դատապարտված անձանց նկատմամբ կիրառվող ուղղման միջոցների առանձնահատկությունները: Դատապարտյալին չվարձատրվող աշխատանքների ներգրավելը: Խրախուսանքի և տույժի միջոցները: Կալանքի դատապարտվածների նյութակենցաղային և բուժսանիտարական ապահովումը Կալանք պատժատեսակի կատարման առանձնահատկությունները դատապարտյալ զինծառայողների նկատմամբ: Զինվորական կալանատունը որպես դատապարտյալ զինծառայողի համար կալանքի կրման վայր: 2. Կարգապահական գումարտակում պահելը պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները: Պատժի կրման վայրերը, դրանց կազմակերպական ենթակայությունը: Կանոնակարգը կարգապահական գումարտակում, դրա առանձնահատկությունները: Դատապարտյալների նյութակենցաղային և բուժսանիտարական ապահովումը: Դատապարտյալ զինծառայողների իրավական դրությունը: Դատապարտյալների տեսակցութ-

յունները, ծանրոցներ, հանձնուքներ և փաթեթներ ստանալը, նամակագրությունը, սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելը: Պատժի կրման պայմանների փոփոխումը: Խրախուսանքի և տույժի միջոցները: Դատապարտյալ զինծառայողներին աշխատանքի ներգրավելը:

Հարցեր 1-2 – Անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը խնդրահարույց հարցերի վրա բևեռելով:

Հարցեր 1-2 – Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խոր գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Խաչիկյան Հ.Մ. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական իրավունք: Ուսումնական ձեռնարկ Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011:
2. ՀՀ Քրեակատարողական օրենսգիրք

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Федоров С. Направление в дисциплинарную воинскую часть и лишение свободы. Законность 2005, N 2.
2. Зубарев С.М., Казакова В.А., Толкаченко А.А. Уголовно-исполнительное право 2010.
3. Безнасюк А.С. Уголовные наказания военнослужащих: теория, законодательство, право. М., 1999.
4. Лобов Я.В. Исполнение наказания в виде ареста в отношении осужденных военнослужащих (научно-практический комментарий к главе 19 УИК РФ). Право в вооруженных силах, 2009, № 12.

5. Лобов Я.В. Исполнение наказания в виде ограничения по военной службе(научно-практический комментарий к главе 19 УИК РФ). Право в вооруженных силах, 2008, № 10.

Թեմա 8. ԱԶՍԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՈՒՂՂԻՉ (ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

(4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար,
2 ժամ ինքնուրույն աշխատանք)

1. Ազատագրկման կատարման ընդհանուր դրույթները:
2. Ազատագրկման դատապարտվածների դասակարգման հասկացությունը և դասակարգման խմբերը: Դատապարտյալների դասակարգման չափանիշները. սոցիալ-ժողովրդագրական, քրեաիրավական և քրեակատարողական: Դատապարտյալներին միմյանցից անջատ պահելու կանոնները:
3. Դատապարտյալների բաշխումն ըստ ուղղիչ հիմնարկների տեսակների:
4. Ազատագրկման դատապարտվածներին պատիժը կրելու ուղարկելը և ուղղիչ հիմնարկներ ընդունելու կարգը:
5. Դատապարտյալներին կալանավորվածներին պահելու վայրում թողնելը կամ փակ կամ կիսափակ ուղղիչ հիմնարկ ուղարկելը:
6. Ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելը:

Հարցեր 1-6 – Անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը խնդրահարույց հարցերի վրա բևեռելով:

Հարցեր 1-6 – Անցկացվում է սեմինար պարապմունք՝ խնդրահարույց հարցերի քննարկմամբ:

Հարցեր 1-6 – Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խոր գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Խաչիկյան Հ.Մ. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական իրավունք: Ոստումնական ձեռնարկ Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011:
2. ՀՀ Քրեակատարողական օրենսգիրք

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Федоров С. Направление в дисциплинарную воинскую часть и лишение свободы. Законность 2005, N 2.
2. Акимов С.К. Осужденные в тюрьмах. М. 2011.
3. Ведищев Н.П. Некоторые вопросы отбывания наказания осужденными в местах лишения свободы. Адвокат 2010, N 6.
4. Данилин Е. М. Осужденные в воспитательных колониях. М., 2011.
5. Громов М.А. Обеспечение порядка и безопасности в исправительных учреждениях. Рязань, 2002.
6. Иванов П.В. Роль воспитательных колоний в системе исполнения наказаний. Вопросы ювенальной юстиции 2008, N 5.
7. Смирнов А.М. Длительные сроки лишения свободы в отношении осужденных мужчин. М., 2010.
8. Зубарев С.М., Казакова В.А., Толкаченко А.А. Уголовно-исполнительное право 2010.
9. Бриллиантов А.В. Проблемы классификации осужденных к лишению свободы в целях дифференциации условий отбывания наказаний. М., 1995.

**Թեմա 9. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ
ՈՒՂՂԻՉ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ**

(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Ազատագրվում պատժատեսակի կատարման կանոնակարգի հասկացությունը, հիմնական պահանջները, գործառույթները և բովանդակությունը: Պատժիչ, դաստիարակչական, ապահովող և

պրոֆիլակտիկ (սոցիալական վերահսկողության) գործառույթներ:

2. Կանոնակարգն ուղղիչ հիմնարկներում արտակարգ իրավիճակներում: 3. Կանոնակարգի բովանդակությունն ուղղիչ հիմնարկներում: Կանոնակարգի պահանջներն ուղղված ուղղիչ հիմնարկների աշխատակիցներին. դատապարտյալների մեկուսացումն ու նրանց անվտանգության, ներքին կարգապահության ապահովումը, դատապարտյալների իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման ապահովումը, պատիժ կրող դատապարտյալների հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխումը: Կանոնակարգի պահանջները, որոնք կարգավորում են ուղղիչ հիմնարկներում օրվա կանոնակարգը, դատապարտյալների իրավունքների իրականացումը և պարտականությունների կատարումը, ուղղիչ ներգործության միջոցների կիրառումը, դատապարտյալների սոցիալական պաշտպանվածության ապահովումը: 4. Ազատագրկման դատապարտվածների պատժի կրման պայմանների փոփոխումը: 5. Ազատագրկման կատարման կարգը և պայմանները տարբեր տեսակի ուղղիչ հիմնարկներում: 6. Դատապարտյալներին ուղղիչ հիմնարկներ ընդունելու կարգը, նրանց վարքագծի կանոնները, աշխատանքի և հանգստի ժամանակը: Դատապարտյալների տեսակցությունները (կարճատև և երկարատև) ազգականների կամ այլ անձանց հետ: Ազատագրկման դատապարտվածների ծանրոցներ, հանձնուքներ, փաթեթներ և դրամական առաքումներ ստանալու կարգն ու պայմանները: Դատապարտյալների նամակագրությունը և հեռախոսային խոսակցությունները: Դատապարտյալների կողմից հեռուստահաղորդումների և կինոֆիլմերի դիտումն ու ռադիոհաղորդումների ունկնդրումը, գրականություն ձեռք բերելը: Ազատագրկման դատապարտվածների ուղղիչ հիմնարկների սահմաններից դուրս առանց պահակախմբի կամ առանց ուղեկցորդման տեղաշարժվելու կարգը և պայմանները: Մեկնումներն ուղղիչ հիմնարկի սահմաններից դուրս: 7. Պատժի կրման պայմանների փոփոխումը, ինչպես

մեկ ուղղիչ հիմնարկի շրջանակներում, այնպես էլ դատապարտյալին մեկ ուղղիչ հիմնարկից մեկ այլ ուղղիչ հիմնարկ տեղափոխելու միջոցով: Ազատագրկման կատարման կարգը և պայմանները տարբեր ուղղիչ հիմնարկներում: Բաց ուղղիչ հիմնարկներ: Կիսաբաց ուղղիչ հիմնարկներ: Կիսափակ ուղղիչ հիմնարկներ: Փակ ուղղիչ հիմնարկներ: Ցմահ ազատագրկման դատապարտվածների պատիժը կրելու առանձնահատկությունները: Անչափահաս դատապարտյալների պատիժը կրելու առանձնահատկությունները: 8. Կանոնակարգի ապահովման միջոցներն ուղղիչ հիմնարկներում: Դատապարտյալների պահպանությունը և մշտական հսկողությունը նրանց նկատմամբ: Օպերատիվ հետախուզական գործունեությունն ուղղիչ հիմնարկներում: Կարգապահական ներգործությունը. դատապարտյալների նկատմամբ կիրառվող խրախուսանքի և տույժի միջոցները: Ազատագրկման դատապարտվածների կողմից պատժի կրման սահմանված կարգի չարամիտ խախտումներ: Դատապարտյալների նկատմամբ կիրառվող անվտանգության և անձնական անվտանգության միջոցները, դրանց կիրառման կարգը: Զենք գործադրելու հիմքերը:

Հարցեր 1-8 – Անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը խնդրահարույց հարցերի վրա բևեռելով:

Հարցեր 1-8 – Անցկացվում է սեմինար պարապմունք՝ խնդրահարույց հարցերի քննարկմամբ:

Հարցեր 1-8 – Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խոր գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Խաչիկյան Հ.Մ. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական իրավունք: Ոստումնական ձեռնարկ Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011:
2. ՀՀ Քրեակատարողական օրենսգիրք

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Барабанов Н.П. Предупреждение побегов осужденных из исправительных колоний: криминологические и организационные меры. Рязань 2010.
2. Гальченко А.И. Предоставление длительных свиданий осужденным с родственниками в исправительных колониях. Законность 2009, N 8.
3. Громов М.А. Обеспечение порядка и безопасности в исправительных учреждениях. Рязань 2002.
4. Жуков А.В. Особенности условий содержания в штрафных изоляторах, помещениях камерного типа, единых помещениях камерного типа и одиночных камерах. Уголовно-исполнительная система: право, экономика, управление 2009, N 4.
5. Зубарев С.М., Казакова В.А., Толкаченко А.А. Уголовно-исполнительное право 2010.
6. Симанович А.А. Нарушение и злостное нарушение режима в местах лишения свободы. Уголовно-исполнительная система: право, экономика, управление 2008, № 5.
7. Уласень В.И. Соблюдение законности при наложении и исполнении дисциплинарных взысканий на осужденных. Законность 2009, № 12.

Թեմա 10. ԱԶՍԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱ-ՐԱԿՉԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ
(Ինքնուրույն աշխատանք)

1. Դատապարտյալների աշխատանքի իրավական կարգավորումը: Դատապարտյալների աշխատանքը: Աշխատանքի դաստիարակչական, առողջարար և տնտեսական նպատակները: Աշխատանքի կազմակերպման սկզբունքները: Աշխատանքի կազմակերպման ձևերը: Անհատական աշխատանքային գործունեություն: Դատապարտյալների աշխատանքի պայմանները: Դատապարտյալների աշխատանքի վարձատրությունը: Դատապարտյալների վաստակից պահումներ կատարելը: Դատապարտյալին չվարձատրվող աշխատանքին ներգրավելը: Դաստիարակչական ներգործությունն ուղղիչ հիմնարկներում, կառուցվածքը և իրավական կարգավորումը: Դաստիարակչական աշխատանքի իրավական կարգավորումը, նպատակները և ձևերը: Ազատագրվման դատապարտվածների ուղղմանը նպաստող բարոյական, իրավական, աշխատանքային, ֆիզիկական և այլ դաստիարակություն: Մշակութային, կրոնական, լուսավորչական և մարզական միջոցառումներն ուղղիչ հիմնարկներում: 2. Դատապարտյալների ինքնագործ միավորումները, դրանց խնդիրները: Ինքնագործ միավորումների աշխատանքում դատապարտյալների մասնակցության խրախուսումը: Ինքնագործ միավորումների բաժանմունքները. իրավախախտումների կանխման, արտադրական, մասնագիտական պատրաստման, հանրակրթական, սպորտային, մշակութային, սանիտարակենցաղային և այլն: 3. Դատապարտյալների կրթությունը և մասնագիտական կրթությունը ուղղիչ հիմնարկներում, նշանակությունն ու խնդիրները: Կրթության իրավական կարգավորումը: Մասնագիտական պատրաստման իրավական կարգավորումը: Քրեակատարողական համակազմի կրթական հիմնարկները (դպրոցներ, ուսում-

նախորհրդատվական կետեր): 4. Դատապարտյալների նկատմամբ դաստիարակչական ներգործության իրավական կարգավորումը:

Հարցեր 1-4 – Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Խաչիկյան Հ.Մ. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական իրավունք: Ուսումնական ձեռնարկ Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011:
2. ՀՀ Քրեակատարողական օրենսգիրք

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Бызова М. Право на труд или исправление? Законность 2009, N 2.
2. Емельянова Е.В. Особенности правового регулирования общественных отношений в области труда осужденных к лишению свободы. Общество и право 2009, N 5.
3. Казанцев В.Н. Профессиональное образование осужденных как фактор их ресоциализации. Рязань 2010.
4. Шамсунов С.Х. Современные проблемы организации труда и социальной реабилитации осужденных с учетом требований международных стандартов. Уголовно-исполнительная система: право, экономика, управление, 2006, N 5.
5. Рассказов Л.П. Труд осужденных в России. СПб, 2002.
6. Зауторова Э.В. Нравственно-эстетическое воспитание осужденных, отбывающих лишение свободы. Вологда 2008.

7. Сиряков А.Н. Правовое регулирование воспитательной работы с осужденными к лишению свободы: исторические аспекты и современность. Вологда, 2010.
8. Зубарев С.М., Казакова В.А., Толкаченко А.А. Уголовно-исполнительное право 2010.
9. Наговицина Т.А. Обеспечение основного общего образования и профессионального обучения как средств исправления несовершеннолетних осужденных в период отбывания наказания. Право и образование 2009, № 8.
